

մերձաւոր կոուրի մը մէջ իրենց պիտի ըլլան յաղթողը, նկատելով Հոռոմայեցոց երկպառակութիւնները, — քախտաւորութիւնը կ'ունենանք հրապուրելու, որսալու, ոտք հանելու տէրութեան մէջ ծածկուած կամ հաւանած բոլոր Պարթեները՝ որոնց սրտին մէջ, արշակունիէ մը գիտցի՛ր, փառասիրութիւնը երբէ՛ք, երբէ՛ք չի կրնար մարիլ:

Արշակի գաղափարներու այս մասին Հայր ցնցուեցաւ: Մտքին մէջ արթնցան ինչ որ Գնէլէ լսած էր Անդոկի Գողթման ղդեկին մէջ: Երկուքին ալ գաղափարներու մէջ տեսակ մը նմանութիւն կը գրտնէր:

Այս միջոցին նախասենեակին մէջ ոտնաձայներ լսուեցան: Արշակ լռեց: Սենեակին դուռը մեղմով բացուեցաւ ու ներս յայտնուեցաւ սենեկապանը: Թագաւորն ու Մարդպետը զարմացած ու հարցական աչքերով անոր կողմը դարձան:

— Տէր Արքայ, ըսաւ Երուսաղ, մեծ սեպուհն Տէր Տիրիթ և Մամիկոնեանց նահապետը Տէր Վարդան ունկնդրութիւն կը խնդրեն:

Արշակ ու Հայր ափշած իրարու նայեցան, ու միաժամանակ աղաղակեցին, Այս ժամուն:

Հ. Ն. ԱՆԻՐԿԵԱՆ

Շարայաբեկի



ԵՂԲՕՐ ՏԵՂ

(Ե. ՊՕԼԻՏԻԿՈՎՍԿԱՅԱ — ՄԻՒԱՅԼՈՎԱՅԻ)

Գ.

Անցաւ մի ամիս: Կ'ասես Ալէքսէյը ջրի տակն է սուզուել, չի երևում ո՛չ իզը, ո՛չ թողը: Ո՛րքան անքուն գիշերներ անցկացրեց խեղճ Մարիան, որքան արտասունք թափեց, ենթադրելով ամենատեսակ անբաղդութիւններ, որոնք կարող են պատահել իր խօսնայրին: Կարելի է նա հիւանդ է, կարելի է վարձանւել է...

Այդ մտքերի վրայ սարսուռ անցաւ նշաւ երակներում: «Կը մեռնի, չեմ իմանայ, որտեղ նրան կը թաղեն», մտածում է նէ և արտասունքը հոսում է առակի պէս թշերի վրայից:

Յանկարծ գիւղում լուր տարածեց, որ Ալէքսէյը իր համար լաւ տեղ է ճարել և ամուսնացել է: Ուշաթափեց Մարիան: Վերջին ցունը կտրեց ներանից, նիհարեց. և վճռեց փախչել Մօսկվա, համոզուել ճշմարտութեան մէջ, իսկ յետոյ — նէ մինչև անգամ անկարող էր երևակայել իրեն, ինչ կ'ըլին « յետոյ »: Ընդ ամենը երեք լուրերով, որ Ալէքսէյը թողել էր տնային ծախսի համար, Մարիան ճանապարհուեց ի Մօսկվա ոտքով: Առանց սննդի, համարեա՛ւ առանց հանգստանալու, գնում է նէ ամբողջ օրը, վերջապէս, տեսնում է Մօսկվայի եկեղեցիների գմբէթները, նշաւ նսկում է, Մօսկվան մօտիկ է, ահա և Դաւրօզմիլովսկայա անցափակը (yactaba)... Առաջի ոստիկանին, որին Մարիան դիմեց հարցով, ո՛րտեղ են Լիպկովի գիւղացիք իջնում, ցոյց տուց նէրան մի երկաթ տախտակ է տուն, ներկած դեղին ներկով: Բաց դարպասից երևում էին երկու կողմից ծածկոցներ. նրանց տակ կանգնած էին կառապանների քառանիւ թրթրակները: Բակի՛ մէջ տեղը, թրիքի և ամեն տեսակ աղբի կոյտի մէջ քնուլ էին անում հաւերը, մարդիկ — ո՛չ ոք:

Յոգնած, ջարդած, տանջւած հոգևով ու մարմնով Մարիան ընկաւ դարպասի մօտի դուռանի վրայ: Մի քանի րօպէից յետոյ բակից դուրս եկաւ մի ծերունի՝ հագին կապոյտ քաթանից շապիկ և նստեց Մարիայի մօտ. երկարատեւ լռութիւնից յետոյ, ծերունին աչքի տակով նայեց իր զրացուհուն, և հաւանականաբար, նկատելով նէրա գունատութիւնը և շփոթութիւնը, հարցրեց իրեն նէրա վիճակով հետաքրքրուող:

— Ո՛ւմ ես փնտռում, մօրքո՛յր:

— Մի՛ մարդու կ'ուզէի տեսնել, էն էլ չ' գիտեմ՝ այստեղ է որ, ամօթխածօրէն պատասխանեց Մարիան:

— Դու ո՞ր տեղից ես :

— Լիպովկայ :

— Լիպովկայի գիւղացիք մեզ մօտ են իջնում :

— Փնտռածս մարդը Լիպովկացի էլ է՛, որին փնտրում... Ալէքսէյ Խանովիչ են կոչում, մականւամբ Պրօխորով, նա պաշտօնաթող զինւոր է :

— Այդ տեսակ մալիչ չ'կայ մեզ մօտ, ինձ բոլոր կառապանները ծանօթ են, ասաց մտածելով ծերուկը :

— Նա կառապան չէ, որը ինձ պէտք է...

— Հապա ո՞վ է նա :

— Ձր... չ' գիտեմ, հօրե'ղբայր :

— Հրաշալի' , — բարեսրտաբար ժրպտաց ծերունին...

— Գիտես ինչ, հօրեղբայր եկել էր Լիպկի իր քրոջ մօտ, իսկ յետոյ գնաց Մոսկվա :

— Գնա՛ց և քեզ չը տարաւ, — խորամանկութեամբ ակնարկեց ծերունին : Հասկանում եմ : — Մի' տխրիլ, խելօքս, մենք կ' գտնենք : Մոսկվայում կայ այնպիսի մի հաստատութիւն, որից ոչ—որ չի կարող թաքնւել : Ձրի մէջ ընկնի և այնտեղ էլ մի ակն — թարթում կ' գտնեն : Գնա՛ դու, սիրելիս, ահա այս փողոցով, — ծերունին ցոյց տւեց, ուր պիտի գնար Մարիան : — Բոլոր ժամանակ ուղիղ գնա՛, յետոյ դարձիւր դէպի ձախ, և հէնց որ կ' տեսնես ոստիկան և հարցրո՛ւ նրան. ո՞րտեղ է գտնւում հասցէհաղորդ հիմնարկութիւնը, կը գնաս այնտեղ, ասա՛ անուն, հայրանուն և մականունը այն մարդու, որը քեզ հարկաւոր է, նո՛ւ, ճշմարիտ, և՛ նրա կոչումը ասա՛. գիւղացի, քաղաքացի կամ վաճառական : Երկու կօպէկով կ' տան «թերթիկ», որի վրայ կ'գրես անուն և մականունը, որին փնտրում ես, իսկ քեզ կը պատասխանեն, որ նա բնակւում է այս ինչ փողոցի վրայ, այս ինչ տանը :

— Հօրեղբայր, ես որ անգրագէտ եմ...

— Կը ինդրես մէկին, կ'գրեն :

— Իսկ ես ի՞նչպէս գնամ այդ «հիմնարկութիւնը» :

— Լեզու ունիս կ' գտնես, միայն ուշ չէ... Սպասի՛ր, ես կը գնամ. կ'իմանամ, ժամի քանիսն է :

Եւ ծերունին փողոցիկ քայլերով գնաց դռնապանի մօտ, բայց մի քանի րօպէից վերադարձաւ և ասաց Մարիային, որ արդէն ուշ է, և թէ նէ պէտք է սպասէ մինչև միւս առաւօտ :

— Սպասել չի կարելի, հօրեղբայր, լաւ է ես գնամ, փնտռեմ նրան...

— Յիմար ես դու, հայրաբար նկատեց ծերունին : Ախր չէ՞ որ Մօսկվան կուսական անտառից աւելի վատ է, ես քեզ կը տամ իմ նկուղը, իսկ վաղը առաւօտեան կ'գնաս հասցէհաղորդ հաստատութիւնը :

— Շնորհակալ եմ քեզանից, հօրեղբայր, սիրալիւր խօսքերիդ համար, ես արդէն կ'գնամ : Լիպկովցիները ինձ այստեղ կ'տեսնեն, լաւ չէ՛....

— Է... է... է... Ահա՛ թէ ինչ, նշանակում է, դու գողտուկ ես եկել Մօսկվա... Տեսնում եմ. բանդ վատ է : Ի՞նչպէս դու չես նախատեսել, մէ՛րս, որ մեր պանդրխտանոցում (խան) իջնում են ձեր համագիւղացիները :

— Ես մտածել եմ, հօրեղբայր, միայն թէ գերութիւնն է գցել ինձ ձեզ մօտ : Ընդամենը Մօսկվայում մի անգամ եմ եղել կեանքումս, երբ եղբորս ուսման էի տալիս : Ո՛չ փողոցները, ո՛չ տները չ'գիտեմ, Լսել եմ մեր ժողովրդից, որ Գորօզօմիլովսկայա անցափակի մօտ, խանում իջնում են մեր գիւղացիք, նո՛ւ այստեղ, և եկայ :

— Իսկ Մօսկվա բերող ճանապարհը քեզ ո՞վ ցոյց տւեց :

— Մեր պառանները միշտ աւել են բերում Մօսկվա վաճառելու, նրանցից ես տեղեկացայ, ո՞ր գիւղերի վրայով ճանապարհ կայ :

— Գործը վատ է, վատ, մտախոհու թեամբ կրկնեց ծերունին : — Սպասի՛ր զեռ, յանկարծ մտաբերեց նա : Մեր կառապաններից մէկի մօտ գնում—գալիս էր մի զինւոր : Բո Պրօխորովը չը լինի՛ : Ահա ես կ'հարցնեմ :

— Կարելի է, կառապանն էլ մերայիններեց է, Լիպկովցի... Աւելի լաւ է ես գնամ, հօրեղբայր... — սարսափահար եղաւ Մարիան:

— Լիպկովցիներեց հիմի ո՛չ որ չ'կայ և վախենալու էլ կարիք չկայ: Նստի՛ր այստեղ, մինչև որ կ'լանչեն քեզ: — Դրեւունին գնաց կառապանների խրճիթը և շուտով լուսամուտից լսեց նրա ձայնը:

— Արե՛ր այստեղ, խելօքս, մօտեցիր տնակին, մի՛ վախիլ:

Մարիան մտաւ կառապանների խրճիթը, իաշակներեց երեսին պատկերի առջև և արագութեամբ հայեացքը գցեց բոլոր կառապանների վրայ, որոնք նստած էին սեղանի շուրջը. համոզւելով, որ նրանց մէջ իրենց գիւղացիներից ոչ-որ չ' կայ, նէրա շփոթութիւնը անցաւ:

— Աղ ու հաց, — բարեկեց նէ կառապաններին:

— Համեցէք մեզ հետ ընթերլու, — պատասխանեցին մի քանի ձայներ:

— Եղբայրնե՛ր, դիմեց ծերունի դռնապանը կառապաններին: Ձեզանից ոչ որ չ'գիտէ՞ արդեօք զինուոր Ալէքսէյ Իւանու վիչ Պրօխորովին:

— Ես գիտեմ, — ասաց մի երիտասարդ: Ինչի՞դ է պէտք որ:

— Ահա, մօրքուրն է հարցնում:

— Նամակ են զրկել նրան... ամաչելով պատասխանեց Մարիան:

— Թողի՛ր, ես կ'յանձնեմ, — ասաց կառապանը:

— Հրամայւած է անձամբ յանձնել նրա, — նկատեց Մարիան:

— Դէ՛ որ այդպէս է, փնտոէ՛ նրան, — ասաց կառապանը, ըստ երեւոյթին անբաւական նրանով, որ Մարիան ինքը կ'ուզէ տանել նամակը:

— Դէ՛ դու աչքդ մի՛ տնկիր, Միխայլօ, ասա՛ զինուորի հասցէն, ես կ'գրեմ, իսկ բարի մարդիկ ճանապարհը ցոյց կ'տան, — ամօթահար արեց ծերունին կառապանին: Նա դուրս բերեց նկուղից երկու կտոր թերթ, մի կտոր մատիտ և դրեց լուսամուտին:

— Նախ և առաջ կ'գրեմ ինչպէս գրտնել մեր խանր: «Իօրօգօմիլովսկայա անցափակի մօտ, տուն Գօրիւշկինի»: Հիմի, ասա՛, Միխայլօ, Պրօխորովի հասցէն, դիմեց ծերունին կառապանին:

— «Տվերսկայա փողոց, հիւրանոց Ֆրանսիա», — թելադրեց կառապանը:

Մարիան երկու հասցէն էլ դրեց զըրպանը, գլուխ տւեց կառապաններին, շնորհակալութիւն յայտնեց ղոնապանին և գնաց այն ճանապարհով, որ ցոյց էին տւել նէրան:

Բարի մարդոց օգնութեամբ՝ Մարիան գտաւ «Ֆրանսիա» հիւրանոցը. դեռ ևս հեռից նէ ճանաչեց Ալէքսէյին, որը կանգնած էր սրահում:

— Նա չը ճանաչեց, — մտածում էր Մարիան, մօտենալով ընդունելութեան դրանը — Նա է՛, նա է... — և Մարիան համարձակ կանչեց նրան:

Օրիորդի երևան գալը այնքան անսպասելի էր, որ Ալիքսէյը լուռ մի քանի րօպէ մնաց կանգնած:

— Ինչպէս դուք այստեղ ընկաք, խօսեց, վերջապէս, Ալէքսէյը:

— Եկայ ձեզ տեսութեան... Բոլոր ժամանակ նամակի էի սպասում, իսկ դուք մի տողով անգամ... — Մարիան արտասուեց:

— Ներս արէ՛ք... Ինչպէս կարելի է փողոցում լաց լինել... Ժողովուրդը անց ու դարձ է անում, լաւ չէ՛:

Մարիան ներս մտաւ ղոնապանի սենեակը:

— Դուք իսկապէս ինչո՞ւ համար էք եկել Մարիա Պիարոֆնա: Եթէ փողի համար, սպասեցէք... Կ'ստանամ ոռնիկս, կը վճարեմ, որքան կարող եմ...

— Փողի ետեի՞ց! Կրկնեց Մարիան: — Ո՛չ թէ փողի էի սպասում ձեզանից, այլ նամակի: Ի մի՞տ բերեցէք, Ալէքսէյ Իւանովիչ, ինչ որ ասել էք ինձ Մօսկվա մեկնելու ժամանակ... Բոլորը մտաբերեցէ՛ք:

— Ալէքսէյ, ո՛ւմ հետ ես հաճոյախօսութիւններ անում: Ես կ'յայտնեմ այդ մասին կնոջդ, — յանկարծ լսուեց սանա-

դուխըի վրայից մի ձայն: Աւէքսէյը հեռու փախաւ Մարիայից, տեց պարոնի վերարկուն և երբ դուռը նրա ետևից դուրեց, կրկին դիմեց Մարիային:

— Այստեղ խօսել ձեզ ինձ հետ անշարմար է, դուք ինքներդ տեսնում էք, այնպիսի զործի եմ: Թողէք ձեր հասցէն, ես կ'գամ ձեզ մօտ վաղը:

— Ամուսնացել ես! ամուսնացել ես! ասում էր Մարիան, չ'լսելով Աւէքսէյին:

— Ամուսնացել է', իսկ ես չէի' հաւատում: Պարոններ, պարոններ:

— Գնացէք, Մարիա Պետրովնա: Միայն ամօթանքը ֆիաց ձեզ... Այս րօպէիս կառավարիչը անցաւ... Գնացէ՛ք, ես յետոյ բոլորը կ'բացատրեմ...


Մարիան կ'ասես յատակին կպաւ:

— Դէ՛ գնացէք էլի, — պոռաց նէրա վրայ Աւէքսէյը, բաց անելով դրսի դուռը:

Դողդողալով, զփաղդ Մարիան դուրս եկաւ փողոց: Միայն պիտակի (yaпocак) շնորհիւ՝ որ տեւէ էր դռնապանը, Մարիան գտաւ Գօրիշկինի խանը և, զիշերելով բարի ծերունու նկուղում, հետեւաւ օրը ճանապարհէց տուն:

Թրգմ. ԱՍՏՈՒԾԱՏՈՒՐ ԲԵԿ-ՅՈՎԱ.

Շարայարեղի



ՕՐԱԳԻՐ ԱՌԺԱՄԱՅՆ

Ա Ա Զ Ի Մ Ա Ն Յ Մ Տ Ա Յ Ե Ի Ս Ր Տ Ի

1 8 4 3

Յ Ո Ւ Ն Վ Ա Ր

2

Ամ ըստ ամէ նորեկ ծաղկունք ի վերայ գերեզմանաց փթթին. և թաղեալքն ի նոսա փառելով փախին:

5

Առաջի Աստուծոյ դիւրին է խոնարհել զի մեծ է Տէք, այլ առաջի մարդկան զըժուարին՝ զի հաւասար է:

6

Շուն շնթէ մարդկան, հացկատակ լինի առիւծու:

7

Ազդէ ի սիրտ ելեալն ի սրտէ:

7

Հոգի զմարմին կենդանացուցանէ, սէր զհոգի:

7

Յանկացեալ ամպոյ հպագոյն դիտել զարեգակն՝ սքողեաց և ոչ ինչ ետես:

8

Բարեկամ ընտիր կէս կըջանկութեան:

8

Բարեկամութիւն՝ հոգեւոր ամուսնութիւն:

8

Հաւատք անգործ՝ ասեղն րութ. զործք առանց հաւատոյ՝ ասեղն անծակ. իսկ որ յերկուցն վրիպեալ՝ րութ է իսպառ:

8

Ագահ ի հատուցանելն՝ և զմատուցն ընդ պարտուցն ոսկւոյն հաշուէ:

8

Որչափ անձնասէր՝ այնչափ անձին անձնաչ:

12

Դիւրին է զդիւանս մտաց քանդել, քան զմուրհակս սրտի ջնջել:

12

Զուր փախչի ի մեռելոյ, որ ի սրտին թաղեաց:

12

Սիրտ ուր ստէպ կանգնին և կործանին իղձը՝ նման է կիսաւեր քաղաքի:

13

Հոգ հաստատագոյն է ի տալերս և ես ի հոգ զնամ. ջուր երիցագոյն և ընդարձակ, զմայլիմ և ընկղմիմ մոռցա ի նա. հուր եռանդուն՝ և զայն կրեմ ի սրտի, օդ բարձրագոյն և սուրբ, և նմա փափազիմ և ձգտիմ:

15

Հզօր զէն սատանայի է հաւանութիւն մեր: